# ԱՃԵԼ ԱՆԱՊԱՏԻ ՄԻՋԻՑ ԱՆՑՆԵԼՈՎ

Անհրաժեշտություններ աճման համար (Մաս 1)

*«Ո՜վ Աստված, դու ես իմ Աստվածը, քեզ եմ փնտրում առավոտից. հոգիս ծարավի է քեզ, մարմինս քեզ է ցանկանում այս ցամաք ու ծարավ երկրում, որտեղ ջուր չկա: Այսպես սրբարանում նայեցի քեզ, որ քո զորությունն ու փառքը տեսնեմ, Որովհետև քո ողորմությունն ավելի լավ է, քան կյանքը. իմ շրթունքները պիտի գովեն քեզ: Այսպես պիտի օրհնեմ քեզ իմ կյանքում, քո անունով պիտի բարձրացնեմ իմ ձեռքերը: Իմ կյանքը պիտի կշտանա, ինչպես ճարպով ու պարարտությամբ, և իմ բերանը պիտի օրհնի քեզ ուրախ շրթունքներով: Երբ իմ անկողնում հիշում եմ քեզ, գիշերվա պահերին մտածում եմ քո մասին: Որովհետև դու ինձ օգնական եղար, և ես պիտի ցնծամ քո թևերի հովանավորության տակ: Իմ անձն ամենուր հետևում է քեզ. քո աջը հաստատ է պահում ինձ:»* Սաղմոս 63: 1-8

*«Բարիք գործելուց չձանձրանանք, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք:»* Գաղատացիս 6:9

*«Ուստի ահա ես նրան կհրապուրեմ ու կտանեմ անապատ և կխոսեմ նրա սրտի հետ: Եվ ես այնտեղից իր այգիներն իրեն կտամ և Աքովրի ձորը հույսի դուռ կանեմ, և նա այնտեղ կպատասխանի իր մանկության օրերի պես և Եգիպտոսի երկրից իր դուրս գալու օրվա պես: Այն օրը,- ասում է Տերը, ինձ "այրս" կկոչես և ինձ այլևս "Բահաղս" չես ասի: Ես Բահաղների անունները կհեռացնեմ նրա բերանից, և նրանք այլևս չպիտի հիշվեն իրենց անուններով: ...Եվ այն օրը, որ ես կպատասխանեմ,- ասում է Տերը,- կպատասխանեմ երկնքին, և նա կպատասխանի երկրին: Եվ երկիրը կպատասխանի ցորենին, գինուն և յուղին, և նրանք կպատասխանեն Հեզրայելին (իմ ժողովուրդին):»*
Ովսեե 2:14-23

*«Մի ձայն կանչում է. «Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը անապատում, ուղի՛ հարթեք մեր Աստծու համար ամայության մեջ: Ամեն ձոր կբարձրանա, ամեն լեռ ու բլուր կնվաստանա, անհարթը կհարթվի, և խորդուբորդ տեղերը՝ կուղղվեն: Պիտի հայտնվի Տիրոջ փառքը, և ամեն մարմին միասին պիտի տեսնեն այն, որովհետև Տիրոջ բերանն է այդ խոսել»:»* Եսայիա 40:3-5

1. Սպասիր որ այնտեղ հանդիպես Աստծուն

2. Սկսիր սերմեր ցանել հիմիկվանից

3. Չեզոքացրու անկարևոր խանգարիչ հանգամանքները

4. Քննիր թե արդեոք սրտիդ մեջ կուռքեր կա՞ն

*«Սուտ աստվածներին պաշտողները կորցնելու են նրանց հանդեպ վստահությունը:»* Հովնան 2:8

*«...Եվ գնացին սնապաշտության ետևից, և իրենք էլ սնապաշտ դարձան:»* Դ Թագավորաց 17:15

5. Երգիր Աստծո համար

*«Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը անապատում, ...Պիտի հայտնվի Տիրոջ փառքը, և ամեն մարմին միասին պիտի տեսնեն այն, որովհետև Տիրոջ բերանն է այդ խոսել»:»* Եսայիա 40:3-5

Հաջորդ Քարզի Թեման

ՀՈԳԵՎՈՐ ԱՃՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆ

Հովիվ Սարօ Խաչիկեան